ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի** և նույն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Արտավազդի Գալստյանի «Վեբ էջերի կառուցվածքն ու դիզայնը (HTML+CSS)»** ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը ներառում է կիրառական նշանակություն ունեցող թեմաներ և նախատեսված է համալսարանի կրթական ծրագրերում ներառված «Ինֆորմատիկան ֆինանսներում» և «Վեբ տեխնոլոգիաներ» դասընթացների շրջանակներում նյութի ուսումնասիրման, համապատասխան գիտելիքների ձեռքբերման և համակարգչային դասերի անցկացման համար: Ներկայացված են վեբ էջեր ստեղծելու հիմնական առանձնահատկությունները և դրա հետ առնչվող հասկացությունները: Ձեռնարկում անդրադարձ է կատարված կայքերի կառուցման 2 տեխնոլոգիաների՝ HTML-ի և CSS-ի նորագույն մոտեցումներին և աշխատանքի սկզբունքներին: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են նշված տեխնոլոգիաներով աշխատելու առանձնահատկությունները: Ձեռնարկն էականորեն կհեշտացնի ուսանողների կողմից նշված դասընթացների շրջանակներում թեմաների յուրացումը:

Ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Մ.Վ.Մարկոսյան՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի ամբիոնի վարիչ, տ.գ. դոկտոր, պրոֆեսոր:

2) Ա.Ա.Խեմչյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Տեղեկատվական և հեռահաղորդացական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ինստիտուտի (ՏՀՏԷ) տեղեկատվական

անվտանգության և ծրագրային ապահովման (ՏԱԾԱ) ամբիոնի ասիստենտ, տ.գ. թեկնածու:

4) Ա.Լ.Թումանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

3) Ս.Վ.Սահակյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ասիստենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը համապատասխանում է ուսումնամեթոդական ձեռնարկների համար պահանջվող բոլոր չափանիշներին և ունի գործնական կարևոր նշանակություն: Կառուցվածքային և բովանդակային բնույթով այն կարող է օգտակար լինել ոչ միայն համալսարանում դասավանդվող առարկայական ծրագրերի շրջանակներում ուսումնասիրման համար, այլ նաև այլ կրթական ծրագրերում ներառված համապատասխան առարկայական ծրագրեր ուսումնասիրողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի** և նույն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Արտավազդի Գալստյանի «Վեբ էջերի կառուցվածքն ու դիզայնը (HTML+CSS)»** ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Միկրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ) **«Սերվիս»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է «Սերվիս» մասնագիտության ուսանողների և դասախոսների համար: Այն ներառում է համալսարանում դասավանդվող «Սերվիս» կրթական ծրագրի կարևորագույն բաժինները: Ձեռնարկի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ոլորտում առկա հիմնական գիտական հայեցակարգերին, մոտեցումներին, կազմակերպություններում կիրառվող մեթոդներին, ինչպես նաև պետական կարգավորման մեխանիզմներին: Ուսումնական ձեռնարկն առանձնանում է տեսական և գործնական նյութերի հետաքրքիր զուգորդումներով: Այն նպաստում է ուսանողների մոտ արդյունավետ կիրառական գիտելիքների ձևավորմանը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում համակարգված պատկերացում ունենալ սերվիսի տարբեր բնագավառների, դրանց առանձնահատկությունների մասին: Ձեռնարկը միտված է վերլուծական մտածողության, համապատասխան կարողությունների ձևավորման խթանմանը:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Կ.Գ.Խաչատրյան՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Կ.Լ.Աթոյան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

3) Ս.Ս.Ավետիսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկն արդիական է և անհրաժեշտ: Այն ամբողջական, վերլուծական հարուստ նյութ պարունակող աշխատություն է, որը մեծապես կնպաստի

կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Ձեռնարկը կարող է օգտակար լինել համալսարանի «Սերվիս» կրթական ծրագրի շրջանակներում դասավանդվող առարկաների առավել լիարժեք ընկալման և յուրացման համար: Այն կարող է կիրառվել նաև այլ բուհերի ուսանողների և դասախոսների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, միկրոէկոնոմիկայի ամբիոնի, կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ միկրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ) **«Սերվիս»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի փետրվարի 8-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Կամո Արամի Խաչատրյանի** և նույն ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Լավրենտի Թումանյանի «Տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր (ՏՇԿՀ)»** ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը նվիրված է MS SQL Server ռելյացիոն տվյալների շտեմարանների ղեկավարման համակարգին, համակարգի ճարտարապետությանը: Ձեռնարկի նպատակն է ուսուցանել տվյալների բազաների նախագծման, մշակման տեխնոլոգիաները, տվյալների բազաների կառավարման համակարգերի միջավայրում աշխատելու, տվյալների բազաների ադմինիստրավորման սկզբունքները: Ձեռնարկում շարադրված են ռելյացիոն տվյալների բազաների կազմակերպման մեթոդները, տրված է SQL մասնագիտացված լեզվի նկարագիրը՝ որպես տվյալների բազաների ձևավորման, ինչպես նաև տվյալների որոշման, մշակման և ինֆորմացիայի դուրս բերման գործիքակազմ: Ներկայացված են SQL լեզվի հրամանները և գործիքամիջոցները, որոնք ապահովում են տվյալների դասակարգումը, խմբավորումը և ագրեգատային ֆունկցիաների կատարումը: Ներկայացված են աղյուսակների միավորման միջոցները՝ տվյալների միջև ֆունկցիոնալ կապերի օգտագործմամբ, ինչպես նաև քննարկված են տվյալների բազաների կառավարման MS SQL Server համակարգի բաղադրիչները, հիմնական ֆունկցիաները, ներկառուցված SQL-ի հնարավորությունները, Transact SQL լեզուն: Ձեռնարկն արժեքավոր է նրանով, որ տեսական գիտելիքներից բացի, օգտագործողները կարող են ամրապնդել իրենց տեսական գիտելիքները լաբորատոր և գործնական աշխատանքների միջոցով:

Ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Է.Ա.Ղազարյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) Ս.Ս.Ավետիսյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Տեղեկատվական և հեռահաղորդացական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ինստիտուտի (ՏՀՏԷ) ալգորիթմական լեզուների և ծրագրավորման ամբիոնի վարիչ, տ.գ. թեկնածու, դոցենտ:

3) Ա.Յու.Ղազարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված աշխատանքը համապատասխանում է ուսումնամեթոդական ձեռնարկների համար պահանջվող չափանիշներին: Այն կարող է օգտակար լինել ոչ միայն մասնագիտական կուրսերի ուսանողների, այլ նաև ոչ մասնագիտական ծրագրերում տվյալների շտեմարանների ստեղծման, մշակման և նախագծման խնդիրներով հետաքրքրվողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Կամո Արամի Խաչատրյանի** և նույն ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Լավրենտի Թումանյանի «Տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր (ՏՇԿՀ)»** ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան